

ԱՄՈՎՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԱՄՈՎՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1

Թեկուէի հօտերու տէրերէն Ամովսի խօսքերը, որոնք «իբե՛ն տեսիլքով հաղորդուեցան»<sup>ա</sup> Իսրայէլի մասին, Յուդայի թագաւորին՝ Ոգիայի օրերը, եւ Իսրայէլի թագաւորին՝ Յովասի որդիին Յերոբովամի օրերը, երկրաշարժէն երկու տարի առաջ.– 2 ան ըսաւ.

«<sup>բ</sup>Տէրը Սիոնէն պիտի գոչէ,  
Երուսաղէմէն իր ձայնը լսել պիտի տայ.  
Հովիւներուն մարգագետինները սուգ պիտի պահեն,  
Եւ Կարմեղոսի գագաթը պիտի չորնայ»:

ԻՍՐԱՅԷԼԻ ԴՐԱՅԻՆԵՐՈՒՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ա- ՍՈՒՐԻԱ

3 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Դամասկոսի երեք յանցանքին համար,  
Ու չորսին համար անոր պատիժը պիտի չկասեցնեմ.  
Արդարեւ անոնք Գաղաադը երկաթէ ցաքաններով ծեծեցին:

4 Ուստի Ազայէլի տան վրայ կրակ պիտի դրկեմ,  
Որ պիտի սպառէ Բենադադի պալատները:

5 Դամասկոսի նիգերը պիտի կոտորեմ,  
Աւէնի դաշտէն բնակիչը պիտի բնաջնջեմ,  
Նաեւ «Բեթեղեմէն մական բռնողը,

Ու Սուրիայի ժողովուրդը դէպի Կիր պիտի տարագրուի», կը յայտարարէ Տէրը:

բ- ՊԱՂԵՍՏԻՆ

6 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Գազայի երեք յանցանքին համար,  
Ու չորսին համար անոր պատիժը պիտի չկասեցնեմ.  
Արդարեւ անոնք տարագիրները գանգուածաբար տարագրեցին,  
Որպէսզի Եդովմի ձեռքը մատնեն:

7 Ուստի Գազայի պարիսպին վրայ կրակ պիտի դրկեմ,  
Որ պիտի սպառէ անոր պալատները:

8 Ազովտոսէն բնակիչը պիտի բնաջնջեմ,  
Եւ Ասկադոնէն՝ մական բռնողը.

<sup>ա</sup> Եբր.՝ ինք տեսաւ

<sup>բ</sup> Եբր.՝ Եհովան

<sup>գ</sup> Եբր.՝ մռնչէ

<sup>դ</sup> Կամ՝ չհեռացնեմ

<sup>ե</sup> Այսինքն՝ Եդեմի տունէն

<sup>զ</sup> Եբր.՝ ամբողջութեամբ

## ԱՄՈՎՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Իմ ձեռքս Ակկարոնի դէմ պիտի դարձնեմ,  
Ու Փղշտացիներու մնացորդը պիտի կորսուի»,  
Կը յայտարարէ Տէրը՝ Եհովան:

### գ- ԼԻԲԱՆԱՆ

- 9 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Տիրոսի երեք յանցանքին համար,  
Ու չորսին համար անոր **պատիժը** պիտի չկասեցնեմ.  
Արդարեւ անոնք տարագիրները զանգուածաբար Եդովմի ձեռքը մատնեցին,  
Առանց յիշելու եղբայրական ուխտը:
- 10 Ուստի Տիրոսի պարիսպին վրայ կրակ պիտի դրկեմ,  
Որ պիտի սպառէ անոր պալատները»:

### դ- ԵԴՈՎՍ

- 11 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Եդովմի երեք յանցանքին համար,  
Ու չորսին համար անոր **պատիժը** պիտի չկասեցնեմ.  
Արդարեւ իր եղբայրը սուրով հետապնդեց՝  
Իր գթութիւնը՝ չլանալով.  
Իր բարկութիւնը անդադար բզքտեց,  
Եւ ցասումը ընդմիջտ պահեց:
- 12 Ուստի Թեմանի վրայ կրակ պիտի դրկեմ,  
Որ պիտի սպառէ Բոսրայի պալատները»:

### ե- ԱՄՍՈՆ

- 13 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ամմոնի որդիներուն երեք յանցանքին համար,  
Ու չորսին համար անոնց **պատիժը** պիտի չկասեցնեմ.  
Արդարեւ Գաղաադի յղի կիները ճեղքեցին,  
Որպէսզի իրենց հողամասը ընդարձակեն:
- 14 Ուստի Ռաբբայի պարիսպին վրայ կրակ պիտի վառեմ,  
Որ պիտի սպառէ անոր պալատները:  
**Ասիկա պիտի ըլլայ** պատերազմին օրը՝ գոչիւնով,  
Փոթորիկին օրը՝ մրրիկով.
- 15 <sup>բ</sup>Անոնց թագաւորը՝ տարագրութեան պիտի երթայ,  
Ինք եւ իր իշխանաւորները՝ միասին», կը յայտարարէ Տէրը:

### զ- ՄՈՎԱԲ

---

<sup>Կ</sup> Եբբ.՝ կտրելով

<sup>Ը</sup> Եբբ.՝ բռնկեցնեմ

<sup>Բ</sup> Կամ՝ Մեղքոմը

2

Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Մովաբի երեք յանցանքին համար,  
Ու չորսին համար անոր պատիժը պիտի չկասեցնեմ.

Արդարեւ Եդովմի թագաւորին ոսկորները այրեց՝ կիրի վերածելով:

2 Ուստի Մովաբի վրայ կրակ պիտի դրկեմ,

Որ պիտի սպառէ Կարիոթի պալատները:

Մովաբ ժխորի ու գոչիւնի մէջ, շեփորի ձայնով պիտի մեռնի:

3 Անոր մէջէն դատաւորը պիտի բնաջնջեմ,

Եւ իրեն հետ իր բոլոր իշխանաւորները պիտի մեռցնեմ», կը յայտարարէ Տէրը:

Է- ՅՈՒԴԱ

4 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Յուդայի երեք յանցանքին համար,  
Ու չորսին համար անոր պատիժը պիտի չկասեցնեմ.

Արդարեւ անոնք Տէրոջ օրէնքը <sup>բ</sup>մերժեցին

Եւ անոր պատուիրանները չպահեցին,

Հապա իրենց ստութիւնները զիրենք մոլորեցուցին,

Որոնց հետեւեր էին իրենց հայրերը:

5 Ուստի Յուդայի վրայ կրակ պիտի դրկեմ,

Որ պիտի սպառէ Երուսաղէմի պալատները»:

ԻՄՐԱՅԷԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

6 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Իսրայէլի երեք յանցանքին համար

Ու չորսին համար անոր պատիժը պիտի չկասեցնեմ.

Արդարեւ անոնք արդարը ծախեցին դրամի փոխարէն,

Եւ աղքատը՝ զոյգ մը կօշիկի:

7 Անոնք չքաւորներուն գլուխին վրայ կը <sup>գ</sup>տենչան երկրի հողը տեսնել,

Ու հեգերուն ճամբան կը ծռեն.

Իմ սուրբ անունս աղարտելու համար՝

<sup>դ</sup>Որդին եւ հայրը միեւնոյն պատանուհիին կը մտնեն:

8 Անոնք ամէն բազինի քով կ'երկնան՝

Գրաւ առնուած հագուստներու վրայ,

Եւ իրենց աստուածներուն տան մէջ

Տուգանքի ենթարկուածներուն գինին կը խմեն:

<sup>ա</sup> Կամ՝ չհեռացնեմ

<sup>բ</sup> Կամ՝ անարգեցին

<sup>գ</sup> Եբբ.՝ հեւան

<sup>դ</sup> Եբբ.՝ Մէկը

- 9 Մինչդեռ ե՛ս անոնց առջեւէն բնաջնջեցի Ամորհացին,  
Որուն բարձրութիւնը մայրիներու բարձրութեան պէս էր,  
Ու կաղնիներու պէս զօրաւոր էր.  
Վերէն անոր պտուղը փճացուցի,  
Եւ վարէն՝ անոր արմատները:
- 10 Ե՛ս ձեզ Եգիպտոսէն բարձրացուցի,  
Ու ձեզի քառասուն տարի անապատին մէջ քալել տուի,  
Որպէսզի Ամորհացիին երկրին տիրանաք:
- 11 Նաեւ ձեր որդիներէն մարգարէներ հանեցի,  
Եւ ձեր երիտասարդներէն՝ <sup>Ե</sup> ուխտաւորներ:  
Միթէ այդպէս չէ՞, ո՛վ Իսրայէլի որդիներ, – կը պատգամէ Տէրը:–
- 12 Դուք ուխտաւորներուն գինի խմցուցիք,  
Ու մարգարէներուն հրամայեցիք.  
“Մի՛ մարգարէանաք՝:
- 13 Ահա՛ ես <sup>Գ</sup> ձեզ պիտի ճզմեմ ձեր եղած տեղը,  
Ինչպէս որաներով լեցուն սայլը կը ճզմէ **իր անցած տեղը**”.
- 14 <sup>Ե</sup> Թեթեւաշարժը պիտի չկարենայ փախչիլ՝,  
Ուժեղը պիտի **չկարենայ** իր ոյժը <sup>Բ</sup> գործածել,  
Զօրաւորը պիտի **չկարենայ** իր անձը ազատել.
- 15 Աղեղ բռնողը պիտի **չկարենայ** կայնիլ,  
<sup>Բ</sup> Թեթեւաշարժը պիտի **չկարենայ ինքզինք** ազատել,  
Զի հեծնողն ալ պիտի **չկարենայ** իր անձը ազատել.
- 16 Զօրաւորներուն մէջ քաջասիրտ եղողը՝  
Այդ օրը մերկ պիտի փախչի», կը պատգամէ Տէրը:

### 3

Լսեցէ՛ք սա՛ խօսքը, ո՛վ Իսրայէլի որդիներ,  
Որ Տէրը ձեզի դէմ կ’արտասանէ,  
Այն ամբողջ գերդաստանին դէմ՝  
Որ Եգիպտոսի երկրէն <sup>Մ</sup> բարձրացուց.

2 «Երկրագունդի բոլոր գերդաստաններէն միայն ձեզ ճանչցայ,  
Հետեւաբար ձեզ պիտի <sup>Բ</sup> պատժեմ ձեր բոլոր անօրէնութիւններուն համար»:

<sup>Ե</sup> Եբբ.՝ անջատուածներ

<sup>Գ</sup> Կամ՝ ձեր **մեղքերուն** տակ ճնշուած եմ, ինչպէս որաներով լեցուն սայլը կը ճնշուի

<sup>Ե</sup> Եբբ.՝ Փախուստը թեթեւաշարժէն պիտի կորսուի

<sup>Բ</sup> Եբբ.՝ զօրացնել

<sup>Բ</sup> Եբբ.՝ թեթեւ ոտք ունեցողը

<sup>Մ</sup> Եբբ.՝ բարձրացուցի

<sup>Բ</sup> Եբբ.՝ հատուցանեմ

- 3 «Երկու մարդիկ միասին կը քալե՞ն՝  
Եթէ իրարու չհանդիպին:
- 4 Միթէ առիւծը անտառին մէջ կը մռնչէ՞,  
Եթէ որս մը չունենայ.  
Կորիւնը իր որջէն <sup>9</sup>կը գոռա՞յ»,  
Եթէ բան մը բռնած չըլլայ:
- 5 Միթէ ճնճողուկը երկրի վրայ վարմի մէջ կ'իյնա՞յ,  
Եթէ անոր համար որոգայթ լարուած չըլլայ.  
Վարմը գետիցէն կը վերցուի՞,  
Երբ բան մը բռնած չըլլայ:
- 6 Եթէ քաղաքին մէջ շեփոր հնչուի,  
Ժողովուրդը չի՞ սարսռար:  
Միթէ քաղաքին մէջ չարիք մը կը պատահի՞,  
Եթէ Տէրը զայն ըրած չըլլայ:
- 7 Ի՞րապէս Տէրը՝ Եհովան ոչինչ կ'ընէ,  
Առանց իր գաղտնիքը յայտնելու իր ծառաներուն՝ մարգարէներուն:
- 8 Առիւծը մռնչեց, ո՞վ պիտի չվախնայ.  
Տէրը՝ Եհովան խօսեցաւ, ո՞վ պիտի չմարգարէանայ»:

ՍԱՄԱՐԻԱՅԻ ԴԱՏԱՎՃԻՌԸ

- 9 <sup>10</sup>Կանչեցէ՛ք Ազովտոսի մէջ՝ պալատներուն վրայ,  
Ու Եգիպտոսի երկրին մէջ՝ պալատներուն վրայ, եւ ըսէ՛ք.  
«Հաւաքուեցէ՛ք Սամարիայի լեռներուն վրայ,  
Ու տեսէ՛ք անոր ներսը եղած մեծ խռովութիւնը,  
Եւ անոր մէջ գործուած հարստահարութիւնները:
- 10 Արդարեւ ուղղամտութեամբ վարուիլ չեն գիտեր, – կը պատգամէ Տէրը, –  
Հապա իրենց պալատներուն մէջ բռնութիւն ու զրկանք կը դիզեն»:
- 11 Ուստի Տէրը՝ Եհովան սա՛ կը յայտարարէ.  
«Հակառակորդը երկիրը պիտի շրջապատէ,  
Զօրութիւնդ <sup>11</sup>պիտի խորտակէ՞»,  
Եւ պալատներդ պիտի կողոպտուին»:
- 12 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ինչպէս հովիւը առիւծին երախէն  
Երկու սրունք կամ ականջի կտոր մը կ'ազատէ,  
Այնպէս պիտի ազատին Իսրայէլի որդիները,  
Որոնք Սամարիայի մէջ <sup>12</sup>բազմոցի մը անկիւնը կը նստին,

<sup>9</sup> Եբբ.՝ ձայնը լսել կու տա՞յ

<sup>10</sup> Եբբ.՝ Լսել տուէք

<sup>11</sup> Եբբ.՝ քեզմէ պիտի իջեցնէ

<sup>12</sup> Կամ՝ մահիճի

ԱՄՈՎՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ու <sup>է</sup>Դամասկոսի կերպասով **զարդարուած**<sup>՝</sup> մահճակալի վրայ»:

- 13 «Լսեցէ՛ք ու Յակոբի տան վկայեցէ՛ք,–  
Կը պատգամէ գօրքերու Աստուածը, Տէրը՝ Եհովան.–
- 14 Այն օրը՝ երբ Իսրայէլի յանցանքները անոր հատուցանեմ,  
Բեթէլի բագիններն ալ <sup>բ</sup>պիտի պատժեմ՝.  
Բագինին եղջիրները պիտի կոտորին ու գետինը իյնան:
- 15 Չմեռնային տունը պիտի <sup>բ</sup>քանդեմ ամառնային տան հետ,  
Փղոսկրէ տունները պիտի կորսուին,  
Եւ մեծ տունները պիտի <sup>գ</sup>անհետանան», կը պատգամէ Տէրը:

4

«Լսեցէ՛ք սա՛ խօսքը, ո՛վ Սամարիայի լերան վրայ եղող Բասանի կովեր,  
Որ չքաւորները կը հարստահարէք,  
Աղքատները կը ճնշէք,  
Եւ ձեր տէրերուն կ'ըսէք. «Բե՛ր՝ որպէսզի խմենք»:

- 2 Տէրը՝ Եհովան իր սրբութեամբ երդում ըրաւ,  
Թէ ահա՛ ձեր վրայ պիտի գան օրերը՝  
Երբ ձեզ կենտրով պիտի վերցնէ,  
Ու ձեր յետնորդները՝ ձուկի կարթերով:
- 3 Դուք խրամատներէն դուրս պիտի ելլէք՝ իւրաքանչիւրը իր դիմացը **երթալով**,  
Եւ բերդը պիտի նետուիք», կը պատգամէ Տէրը:

ԻՍՐԱՅԷԼԻ ԶԱՆՅԱՌՈՒԹԻՒՆԸ

- 4 «Բեթէ՛լ եկէք ու յանցա՛նք գործեցէք,  
Գաղգաղայի մէջ շատցուցէ՛ք յանցանքները.  
Չեր զոհերը ամէ՛ն առտու բերէք,  
Եւ ձեր տասանորդները՝ երեք <sup>ա</sup>օրը անգամ մը:
- 5 Շնորհակալութեան զոհը խմորեա՛լ մատուցանեցէք,  
Ու յօժարակա՛մ ընծաներ յայտարարեցէք **եւ** <sup>բ</sup>ծանուցանեցէք,  
Քանի որ ասիկա սիրեցիք, ո՛վ Իսրայէլի որդիներ,–  
Կը պատգամէ Տէրը՝ Եհովան:–
- 6 Ես ալ ձեզի ակռայի <sup>գ</sup>մաքրութիւն տուի ձեր քաղաքներուն մէջ,

<sup>է</sup> Կամ՝ Դամասկոսի մէջ

<sup>բ</sup> Եբբ.՝ աչքէ պիտի անցընեմ

<sup>բ</sup> Եբբ.՝ զարնեմ

<sup>գ</sup> Եբբ.՝ բնաջնջուիմ

<sup>ա</sup> Ոմանք՝ տարին

<sup>բ</sup> Եբբ.՝ լսել տուէք

<sup>գ</sup> Եբբ.՝ անմեղութիւն

- Ու հացի կարօտութիւն՝ ձեր բոլոր տեղերը,  
Սակայն ինծի չվերադարձաք,– կը պատգամէ Տէրը:–
- 7 Նաեւ տեղատարափը կասեցուցի հունձքէն երեք ամիս առաջ,  
Ու մէկ քաղաքի վրայ անձրեւ տեղացուցի,  
Իսկ միւս քաղաքին վրայ անձրեւ չտեղացուցի.  
Պարտի մը վրայ անձրեւեց,  
Բայց միւս արտը՝ որուն վրայ անձրեւած չէր՝ չորցաւ.
- 8 Երկու–երեք քաղաքներ՝ ջուր խմելու համար  
՝Ուրիշ քաղաք մը գացին՝,  
Բայց <sup>9</sup>չյագեցան,  
Սակայն ինծի չվերադարձաք,– կը պատգամէ Տէրը:–
- 9 Չեզ խորշակահարութեամբ եւ **արմտիքի** դալուկով զարկի,  
Խառնիճը սպառեց ձեր բազմաթիւ պարտէզներն ու այգիները,  
Թզենիներն ու ձիթենիները,  
Սակայն ինծի չվերադարձաք,– կը պատգամէ Տէրը:–
- 10 Չեր վրայ ժանտախտ դրկեցի՝ <sup>1</sup>հնչպէս Եգիպտոսի մէջ՝,  
Չեր երիտասարդները սուրով մեռցուցի՝  
Չեր ձիերը գերեվարելով,  
Չեր բանակավայրերուն գարշահոտութիւնը մինչեւ ձեր քիթը <sup>2</sup>հասցուցի,  
Սակայն ինծի չվերադարձաք,– կը պատգամէ Տէրը:–
- 11 Աստուծոյ կործանած Սոդոմին ու Գոմորին պէս ձեզ **ալ** կործանեցի,  
Հրդեհէն ազատուած <sup>3</sup>խանձողի պէս եղաք,  
Սակայն ինծի չվերադարձաք,– կը պատգամէ Տէրը:–
- 12 Հետեւաբար սա՛պէս պիտի վարուիմ քեզի հետ, ո՛վ Իսրայէլ.  
**Եւ** քանի սա՛պէս պիտի վարուիմ քեզի հետ,  
Քու Աստուածդ դիմաւորելու պատրաստուէ՛, ո՛վ Իսրայէլ.
- 13 Որովհետեւ ահա՛ **կու գայ** ան՝ որ լեռները ձեւակերպեց ու հովը ստեղծեց,  
Եւ մարդուն կը յայտնէ թէ ի՛նչ է իր մտածումը,  
Ան՝ որ արշալոյսը մութ կ՛ընէ  
Ու երկրի բարձունքներուն վրայ կը քալէ.  
Անոր անունը “Եհովա՝ զօրքերու Աստուած” է»:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՄԸ

5

Լսեցէ՛ք սա՛ խօսքը, որ իբր ողբ կը բարձրացնեմ ձեր վրայ,

<sup>7</sup> Եբբ.՝ Արտի բաժինի

<sup>8</sup> Եբբ.՝ Աստանդական շրջեցան դէպի քաղաք մը

<sup>9</sup> Եբբ.՝ չկշտացան

<sup>1</sup> Եբբ.՝ Եգիպտոսի ճամբային մէջ

<sup>2</sup> Եբբ.՝ բարձրացուցի

<sup>3</sup> Այսինքն՝ կիսախանձ փայտի



Ո՛վ Իսրայելի տունը.

- 2 «Իսրայելի կոյսը ինկած է, անգամ մըն ալ պիտի չկանգնի.  
Իր հողին վրայ **երես է** ձգուած է, ո՛չ մէկը զայն կը կանգնեցնէ»:
- 3 Արդարեւ Տէրը՝ Եհովան սա՛ կը յայտարարէ.  
«Այն քաղաքին մէջ՝ ուրկէ հազար **պատերազմիկ** կ'ելլէր,  
Հարիւր պիտի մնայ.  
Ուրկէ հարիւր կ'ելլէր՝  
Տասը պիտի մնայ Իսրայելի տան»:
- 4 Տէրը սա՛ կը յայտարարէ Իսրայելի տան.  
«Զի՛ս փնտռեցէք, որ ապրիք.
- 5 Բայց Բեթէլը մի՛ փնտռէք,  
Գաղգաղա մի՛ մտնէք,  
Բերսաբէէն մի՛ անցնիք.  
Որովհետեւ Գաղգաղա անշուշտ պիտի տարագրուի,  
Ու Բեթէլ պիտի «ոչնչանայ»:
- 6 Տէ՛րը փնտռեցէք, որ ապրիք.  
Որպէսզի կրակի պէս չներխուծէ Յովսէփի տունը  
Եւ **զայն** չսպառէ, ու Բեթէլի մէջ ո՛չ մէկը **կարենայ** զայն մարել:
- 7 Դո՛ւք՝ որ իրաւունքը օշինդրի կը փոխէք,  
Եւ արդարութիւնը գետինը կը ձգէք,
- 8 **Փնտռեցէ՛ք զայն.** ի՛նք Բազմաստեղն ու Հայկը Բստեղծեց,  
Ի՛նք մահուան շուքը առտուան **լոյսի** կը վերածէ,  
Եւ ցերեկը գիշերուան պէս կը <sup>9</sup>մթնցնէ.  
Ի՛նք ծովուն ջուրերը կը կանչէ,  
Ու զանոնք երկրի մակերեսին վրայ կը թափէ:  
Անոր անունը Եհովա է.
- 9 Ի՛նք զօրեղին վրայ յանկարծ կործանում կը բերէ,  
Եւ կործանումը մինչեւ ամրոցը կը հասցնէ:
- 10 <sup>10</sup> Դատարանին մէջ կշտամբողը կ'ատեն,  
Պարկեշտութեամբ խօսողէն կը գարշին:  
11 Հետեւաբար, քանի չքաւորը ոտնակոխ կ'ընէք  
Եւ իրմէ ցորենի <sup>11</sup>պարգեւներ կ'առնէք,  
Տաշուած քարէ տուներ կառուցանեցիք՝  
Բայց անոնց մէջ պիտի չբնակիք.  
Յանկալի այգիներ տնկեցիք՝  
Սակայն անոնց գինին պիտի չխմէք:
- 12 Արդարեւ գիտեմ ձեր բազմաթիւ յանցանքներն ու <sup>12</sup>մեծ մեղքերը.

<sup>9</sup> **Եբր.**՝ ունայն ըլլայ

<sup>10</sup> **Եբր.**՝ շինեց

<sup>11</sup> **Եբր.**՝ խաւարեցնէ

<sup>12</sup> **Եբր.**՝ Դրան

<sup>13</sup> **Եբր.**՝ հարկ

Արդարը կը <sup>Է</sup>ճնշէք, կաշառք կ'առնէք,  
Եւ դատարանին մէջ աղքատներուն դատը կը ծռէք:

13 Հետեւաբար ուշիմ եղողը այն ատեն պիտի լռէ,  
Զանի որ ժամանակը չար է:

14 Բարութիւնն փնտռեցէք, ո՛չ թէ չարութիւն, որպէսզի ապրիք.  
Այսպէս Տէրը՝ զօրքերու Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ, ինչպէս ըսիք:

15 Ատեցէ՛ք չարութիւնը, սիրեցէ՛ք բարութիւնը,  
Եւ <sup>Ը</sup>հաստատեցէ՛ք իրաւունքը դատարանին մէջ.

Թերեւս Տէրը՝ զօրքերու Աստուածը ողորմի Յովսէփի մնացորդին:

16 Հետեւաբար զօրքերու Աստուածը, Տէրը՝ Եհովան, սա՛ կը յայտարարէ.  
«Ամէն հրապարակի մէջ կոծ պիտի ըլլայ,  
Եւ ամէն փողոցի մէջ պիտի ըսեն. «Վա՛յ, վա՛յ՛:»  
Երկրագործը սուգի պիտի կանչեն, ու եղերեգութիւն գիտցողները՝ կոծի:

17 Բոլոր այգիներուն մէջ կոծ պիտի ըլլայ,  
Զանի որ քու մէջէդ պիտի անցնիմ, – կը յայտարարէ Տէրը:–

18 Վա՛յ ձեզի՝ որ Տէրոջ օրուան կը փափաքիք.  
Ձեզի ի՞նչ **օգուտ** պիտի ըլլայ Տէրոջ օրը.  
Ան խաւար է, ո՛չ թէ՛ լոյս.

19 Մարդու մը պէս **պիտի ըլլաք**, որ առիծին առջեւէն կը փախչի  
Եւ արջ մը անոր կը հանդիպի,  
Կամ տունը կը մտնէ ու ձեռքը պատին կը <sup>Ք</sup>դնէ,  
Եւ օձ մը զայն կը խածնէ:

20 Ահա՛ Տէրոջ օրը խաւար է, ո՛չ թէ՛ լոյս.  
Անոր մէջ թանձր մութ կայ, ո՛չ թէ՛ պայծառութիւն:

21 Ձեր տօները կ'ատեն **ու** կը մերժեն,  
Ձեր տօնախմբութիւններէն <sup>Ժ</sup>հաճոյք պիտի չառնեն:

22 Եթէ ինծի ողջակէզներ եւ ձեր **հացի** ընծաները մատուցանէք՝  
Պիտի չհաւանցիմ,  
Ո՛չ ալ <sup>Ի</sup>ուշադրութիւն պիտի դարձնեմ՝ ձեր պարարտ **զուարակներու** խաղաղութեան  
**զոհերուն:**

23 Հեռացո՛ւր ինձմէ քու երգերուդ ձայնը,  
Զանի որ քու տաւիղներուդ նուագը պիտի չլսեն:

24 Բայց իրաւունքը ջուրի պէս թող <sup>Լ</sup>հոսի,

<sup>Գ</sup> Եբբ.՝ հզօր

<sup>Է</sup> Եբբ.՝ ճնշեն

<sup>Ը</sup> Եբբ.՝ դրէ՛ք

<sup>Ք</sup> Կամ՝ յենէ

<sup>Ժ</sup> Եբբ.՝ հոտ

<sup>Ի</sup> Եբբ.՝ պիտի նայիմ

<sup>Լ</sup> Եբբ.՝ դղրդիւնը

<sup>Լ</sup> Եբբ.՝ գլորի

Եւ արդարութիւնը՝ մշտահոս վտակի պէս:

25 Միթէ ինծի գոհեր ու ընծանե՞ր մատուցանեցիք  
Անապատին մէջ՝ քառասուն տարի, ո՛վ Իսրայէլի տունը:

26 Հապա կրեցիք ձեր Վտղոքի խորանը՝,  
Չեր Զիունի պատկերները,  
Եւ ձեզի համար կերտուած աստուածներուն աստղը:

27 Ուստի ձեզ Դամասկոսէն անդին պիտի տարագրեմ»,  
Կը յայտարարէ Տէրը, որուն անունը Զօրքերու Աստուած է:

ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

6

«Վա՛յ Սիոնի մէջ անխռով **ապրողներուն,**  
Սամարիայի լերան վրայ ապահով **բնակողներուն,**  
Ազգերու գլխաւորին՝ **տրեւելիներուն՝**  
Որոնց Քը դիմէ՝՝ Իսրայէլի տունը:

2 Անցէ՛ք Զաղանէ, ու տեսէ՛ք.  
Անկէ գացէ՛ք Մեծն Եմաթը,  
Եւ իջէ՛ք Փղշտացիներուն Գէթը.  
Միթէ անոնք այս թագաւորութիւններէն ակելի՞՞ բարգաւաճ են,  
Կամ անոնց հողամասը ձեր հողամասէն ակելի՞՞ մեծ է»:

3 «Վա՛յ ձեզի, որ ծախորդութեան օրը կը **կարծէք** հեռացնել,  
Ու բռնութեան ՚տիրապետութիւնը կը մօտեցնէք:

4 Անոնք փղոսկրէ մահիճի մէջ կը պառկին,  
Իրենց մահճակալին վրայ՝ կ'երկննան.  
Հօտերուն պարարտ գառները կ'ուտեն,  
Ու գոմերուն **գիրցուած** հորթերը:

5 Տաւիղի ձայնով կը զառանցեն,  
Երաժշտական գործիքներ կը հնարեն իրենց համար՝ Դաւիթի պէս.

6 Բաժակներով գինի կը խմեն,  
ԷԼաւագոյն **հոտաւէտ** իւղերով կ'օծուին,

<sup>ժ</sup> Եբբ.՝ տեւական

<sup>Կ</sup> Կամ՝ թագաւորին տաղաւարը

<sup>ա</sup> Եբբ.՝ որոշուածներուն

<sup>բ</sup> Եբբ.՝ կ'երթայ

<sup>գ</sup> Եբբ.՝ լաւ

<sup>դ</sup> Եբբ.՝ աթոռը

<sup>ե</sup> Եբբ.՝ կը տարածուին

<sup>զ</sup> Եբբ.՝ Կոնքերով

<sup>է</sup> Եբբ.՝ Առաջնակարգ

Սակայն Յովսէփի փլուզումին վրայ չեն կսկծար:

- 7 Հետեւաբար հիմա անոնք առաջին տարագիրներուն հետ պիտի տարագրուին, եւ **մահճակալներու վրայ** երկնցողներուն քրքիջները պիտի դադրին»:
- 8 Տէրը՝ Եհովան իր անձին վրայ երդում ըրաւ,–  
Կը պատգամէ Տէրը՝ գօրքերու Աստուածը.–  
«Ես Յակոբի ամբարտաւանութենէն կը գարշիմ,  
եւ անոր պալատները կ'ատեմ.  
Քաղաքն ու անոր <sup>բ</sup>բոլոր բնակիչները՝՝ <sup>բ</sup>**պատուհասին** պիտի մատնեմ»:
- 9 Եթէ տան մը մէջ տասը մարդ մնայ,  
**Անո՛նք** ալ պիտի մեռնին.
- 10 Երբ **անոցմէ** մէկուն հօրեղբայրը, կամ **դիակը** այրողը զայն վերցնէ՝  
Ոսկորները տունէն դուրս հանելու համար,  
Ու տան <sup>գ</sup>մէջ եղողին ըսէ.  
“Ա՛յ **ուրիշ մէկը** կա՞յ քովդ՞,  
եւ ան պատասխանէ. “Ո՛չ՞,  
**Միւսը** պիտի ըսէ. “Լռէ՛,  
Քանի որ Տէրոջ անունը յիշատակելու **ատենը** չէ՞՞:  
11 Արդարեւ ահա՛ Տէրը կը հրամայէ.  
Ջարներով մեծ տունը պիտի քանդէ,  
Իսկ պզտիկ տունը պիտի ճեղքուի:  
12 Միթէ ձիերը ժայռի վրայ կը վազե՞ն,  
Կամ զայն եզներով կը հերկե՞ն.  
Որովհետեւ դուք իրաւունքը թոյնի փոխեցիք,  
եւ արդարութեան պտուղը՝ օշինդրի:  
13 Դուք ոչինչ բանով կ'որախանաք,  
եւ կ'ըսէք. “Միթէ մե՛ր ոյժով <sup>ի</sup>չվաստկեցա՞նք մեր գօրութիւնը՞.  
14 Հետեւաբար, ո՛վ Իսրայէլի տունը,  
Ահա՛ ես ձեզի դէմ ազգ մը ոտքի պիտի հանեմ,–  
Կը պատգամէ Տէրը՝ գօրքերու Աստուածը,–  
Ու ձեզ Եմաթի մուտքէն մինչեւ դաշտին վտակը պիտի տանջեն»:

ՄԱՐԱԽՆԵՐՈՒ ՏԵՍԻԼԸ ՄԸ

7

Տէրը՝ Եհովան սա՛ ցոյց տուաւ ինձի.  
Ահա՛ մարախներ <sup>ս</sup>ստեղծեց վերջին խոտին <sup>բ</sup>բուսնելուն սկիզբը,

<sup>բ</sup> Եբբ.՝ լիութիւնը

<sup>բ</sup> Կամ՝ թշնամիին

<sup>գ</sup> Եբբ.՝ ներսի կողմը

<sup>ի</sup> Եբբ.՝ մեզի եղջիրներ չառի՞նք

<sup>ւ</sup> Եբբ.՝ ձեւակերպեց

<sup>բ</sup> Եբբ.՝ աճելուն

## ԱՄՈՎՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- Եւ ահա՛ վերջին խոտը թագաւորին խոտհունձէն ետք **աճած** էր:
- 2** Երբ անոնք երկրին բոյսը ամբողջութեամբ կերան,  
Ես ըսի. «Ո՛վ Տէր Եհովա, կ'աղերսե՛մ, ներէ՛.  
Յակոբ ի՞նչպէս պիտի կանգնի, քանի «փոքրաթիւ է»:
- 3** Տէրը ասկէ հրաժարեցաւ.  
«Ասիկա պիտի չըլլայ», յայտարարեց Տէրը:

## ԿՐԱԿԻ ՏԵՍԻԼՔ ՄԸ

- 4** Տէրը՝ Եհովան սա՛ ցոյց տուաւ ինձի.  
Ահա՛ Տէրը՝ Եհովան կրակը կանչեց, որպէսզի անով դատ վարէ.  
Ան ալ մեծ անդունդը սպառեց,  
Նաեւ <sup>7</sup>արտերը սպառեց:
- 5** Ուստի ըսի. «Ո՛վ Տէր Եհովա, կ'աղերսե՛մ, դադրեցո՛ւր.  
Յակոբ ի՞նչպէս պիտի կանգնի, քանի փոքրաթիւ է»:
- 6** Տէրը ասկէ հրաժարեցաւ.  
«Ասիկա պիտի չըլլայ», յայտարարեց Տէրը՝ Եհովան:

## ԿԱՊԱՐԱԼԱՐԻ ՏԵՍԻԼՔ ՄԸ

- 7** Սա՛ ցոյց տուաւ ինձի.  
Ահա՛ Տէրը **կապարալարով կառուցանուած** պարիսպի մը վրայ կայնած էր,  
Ու ձեռքը կապարալար մը կար:
- 8** Տէրը ինձի ըսաւ.  
«Ի՞նչ կը տեսնես, Ամո՛վս»:  
Պատասխանեցի. «Կապարալար մը»:  
Տէրն ալ ըսաւ.  
«Ահա՛ ես իմ ժողովուրդիս՝ Իսրայէլի մէջ կապարալար մը կը դնեմ.  
Ա՛յ անոնց **անօրէնութիւնը** պիտի չանտեսեմ:
- 9** Իսահակի բարձր տեղերը ամայի պիտի ըլլան,  
Իսրայէլի սրբարանները պիտի աւերուին,  
Ու Յերոբովամի տան դէմ սուրով պիտի կանգնիմ»:

## ԱՄՈՎՍ ԵՒ ԱՄԱՍԻԱ

- 10** Բեթէլի քուրմը՝ Ամասիա Իսրայէլի Յերոբովամ թագաւորին **լուր** դրկեց՝ ըսելով.  
«Իսրայէլի տան մէջ Ամովս քեզի դէմ կը դաւադրէ.  
Երկիրը չի կրնար անոր բոլոր խօսքերուն հանդուրժել.
- 11** Արդարեւ Ամովս սա՛ կ'ըսէ.  
“Յերոբովամ սուրով պիտի մեռնի,  
Եւ Իսրայէլ իր <sup>9</sup>երկրէն անշուշտ պիտի տարագրուի»:

---

<sup>4</sup> Եբբ.՝ պզտիկ

<sup>7</sup> Եբբ.՝ արտի բաժինը

<sup>9</sup> Եբբ.՝ հողէն

- 12 Ամասիա ըսաւ Ամովսի.  
«Ո՛վ տեսանող, գնա՛, փախի՛ր Յուդայի երկիրը.  
Հո՛ն հաց կեր ու հո՛ն մարգարէացիր:
- 13 Անգա՛մ մըն ալ Բեթէլի մէջ մի՛ մարգարէանար,  
Քանի որ ան թագաւորին սրբարանն է,  
Եւ թագաւորութեան տունն է»:
- 14 Ամովս պատասխանեց Ամասիայի.  
«Ես ո՛չ մարգարէ էի, ո՛չ ալ մարգարէի որդի,  
Հապա եզնարած ու ժանտաթուզ քաղող էի:
- 15 Տէ՛րը զիս հօտին ետեւէն առաւ  
Եւ ինձի ըսաւ.  
“Գնա՛, մարգարէացի՛ր իմ ժողովուրդիս՝ Իսրայէլի»:
- 16 Ուստի հիմա մտի՛կ ըրէ Տէրոջ խօսքը.  
Դուն կ'ըսես. “Իսրայէլի դէմ մի՛ մարգարէանար,  
Եւ Իսահակի տան դէմ՝ մի՛ խօսիր»:
- 17 Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ.  
“Քու կինդ քաղաքին մէջ պիտի պռռնկի,  
Քու որդիներդ եւ աղջիկներդ սուրով պիտի իյնան,  
Քու <sup>է</sup>երկիրդ լարով պիտի բաժնուի,  
Դուն պիղծ երկրի մը մէջ պիտի մեռնիս  
Եւ Իսրայէլ իր երկրէն անշուշտ պիտի տարագրուի»:

ԿՈՂՈՎԻ ՄԸ ՏԵՍԻԼԸԸ

8

- Տէրը՝ Եհովան սա՛ ցոյց տուաւ ինձի,  
<sup>ա</sup>Կողով մը ամառնային պտուղ,
- 2 Եւ ըսաւ. «Ի՞նչ կը տեսնես, Ամովս»:  
Պատասխանեցի. «Կողով մը ամառնային պտուղ»:  
Տէրն ալ ըսաւ ինձի.  
«Վախճանը հասած է իմ ժողովուրդիս՝ Իսրայէլի վրայ.  
Ա՛յ անոնց **անօրէնութիւնը** պիտի չանտեսեմ:
- 3 Այդ օրը <sup>բ</sup>տաճարին երգերը <sup>գ</sup>ողբեր պիտի ըլլան,—  
Կը պատգամէ Տէրը՝ Եհովան.—  
Ծատ դիակներ պիտի ըլլան ամէն տեղ,  
Ու **զանոնք** լռութեամբ պիտի նետեն»:

- <sup>ա</sup> Եբր.՝ խօսքդ մի՛ կաթեցներ
- <sup>է</sup> Եբր.՝ հողդ
- <sup>ա</sup> Եբր.՝ Ահա՛ կողով
- <sup>բ</sup> Կամ՝ պալատին
- <sup>գ</sup> Եբր.՝ գոռումներ

- 4 «Սա՛ մտիկ ըրէք,  
Դո՛ւք որ աղքատները կը կլլէք՝  
Երկրին դժբախտները՝ ոչնչացնելու համար,
- 5 Ու կ'ըսէք. «<sup>Ե</sup>Ամսագլուխը ե՞րբ պիտի անցնի՝ որ հացահատիկ ծախենք,  
Նաեւ Ծաբաթը՝ որ ցորենի պարկերը բանանք,  
Արդուն պզտիկցնենք եւ՝ «սիկողը մեծցնենք»,  
Ու խարդախուած կշիռքներով խաբենք.
- 6 Որպէսզի չքատրները գնենք՝ դրամի փոխարէն,  
Եւ աղքատները՝ գոյգ մը կօշիկի,  
Ու ցորենին թափթփուկը ծախենք»:
- 7 Տէրը Յակոբի մեծափառութեան վրայ երդում ըրաւ՝ **ըսելով**.  
«Անոնց բոլոր արարքները ամենեւին պիտի չմոռնամ:
- 8 Ասոր համար չէ՞ որ երկիրը պիտի սարսի,  
Եւ անոր բնակիչներէն իւրաքանչիւրը պիտի սգայ.  
Ամբողջովին պիտի բարձրանայ՝՝ գետին պէս,  
Պիտի ուռի, ապա պիտի՝ ցածնայ՝՝ Եգիպտոսի գետին նման»:
- 9 Այդ օրը,– կը պատգամէ Տէրը՝ Եհովան,–  
Արեւը կէսօրին մայր պիտի մտցնեմ,  
Եւ ցերեկուան լոյսին **ատենը** երկիրը պիտի խաւարեցնեմ:
- 10 Ձեր տօները սուգի պիտի փոխեմ,  
Ու ձեր բոլոր երգերը՝ ողբի.  
Ամէն մէջքի վրայ քուրձ պիտի բերեմ,  
Եւ ամէն գլուխի վրայ՝ կնտութիւն:  
**Երկրին մէջ սուգ** պիտի բերեմ՝ մէկ հատիկ **գաւակի** համար եղած սուգին պէս,  
Անոր վախճանը դառնութեան օրուան պէս պիտի ըլլայ»:
- 11 «Ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը՝ Եհովան,–  
Երբ երկրին մէջ սով մը պիտի դրկեմ.  
Ո՛չ թէ հացի սով, ո՛չ ալ ջուրի ծարաւ,  
Հապա Տէրոջ խօսքերը լսելու **սով**:
- 12 Աստանդական պիտի շրջին մէկ ծովէն միւս ծովը,  
Ու հիւսիսէն մինչեւ արեւելք.  
Պիտի շրջագային Տէրոջ խօսքը փնտռելու համար,  
Բայց պիտի չգտնեն:
- 13 Այդ օրը՝ գեղեցիկ կոյսերը  
Եւ երիտասարդները ծարաւէն պիտի խամրին.

---

<sup>Դ</sup> Եբր.՝ դադրեցնելու

<sup>Ե</sup> Եբր.՝ Նոր լուսինը

<sup>Գ</sup> Այսինքն՝ գինը բարձրացնենք

<sup>Կ</sup> Կամ՝ Նեղոսի

<sup>Ը</sup> Եբր.՝ ընկղմի

14 Անոնք որ Սամարիայի յանցանքով երդում կ'ընեն ու կ'ըսեն.  
“Քու Աստուածդ կ'ապրի՛, ո՛վ Դան՛,  
“Բերսաբէի ճամբան կ'ապրի՛ ՚Տ,  
Պիտի իյնան, եւ անգա՛մ մըն ալ պիտի չկանգնին»:

ՏԷՐՈՋ ԴԱՏԱՍՏԱՆԸ

9

Տէրը տեսայ՝ որ զոհասեղանին վրայ կայնած էր, եւ ըսաւ.  
«Զա՛րկ խոյակին, որպէսզի սեմերը ցնցուին.  
Կտրէ՛ անոնց գլուխին վրայ եղողները, “բոլորն ալ”:  
Իսկ անոնց <sup>բ</sup>յետիւնները ե՛ս պիտի մեռցնեմ՝ սուրով:  
Անոնցմէ փախստականը պիտի չկարենայ փախչիլ,  
Եւ անոնցմէ <sup>գ</sup>ճողոպրածը պիտի չկարենայ ազատիլ:

2 Թէեւ անոնք մինչեւ <sup>դ</sup>դժոխքը <sup>ե</sup>փորեն,  
Իմ ձեռքս զիրենք անկէ պիտի բերէ.  
Թէեւ երկինք ելլեն,  
Զանոնք անկէ պիտի իջեցնեմ:

3 Թէեւ Կարմեղոսի գագաթը պահուրտին,  
Զիրենք պիտի փնտռեմ եւ անկէ բերեմ.  
Թէեւ իմ աչքերուս առջեւէն ծածկուին ծովուն յատակը,  
Հոն պիտի հրամայեմ օձին՝ որ զիրենք խածնէ:

4 Թէեւ անոնք իրենց թշնամիներուն առջեւէն գերութեան երթան,  
Հոն պիտի հրամայեմ սուրին՝ որ զանոնք մեռցնէ:  
Իմ աչքս անոնց վրայ պիտի <sup>զ</sup>սեւեռեմ չարիքի համար,  
Ո՛չ թէ բարիքի համար»:

5 Երբ զօրքերու Տէրը՝ Եհովան երկրին դպչի,  
Ան կը հալի,  
Եւ անոր բոլոր բնակիչները կը սգան.  
Ամբողջովին կը բարձրանայ՝ <sup>է</sup>գետին պէս,  
Ապա <sup>ը</sup>կը ցածնայ՝՝ Եգիպտոսի գետին նման:

6 Ի՛նքն է որ իր <sup>ը</sup>վերնատունները կը կառուցանէ երկինքի մէջ,

<sup>ա</sup> Եբր.՝ անոնք բոլորը

<sup>բ</sup> Կամ՝ յաջորդները

<sup>գ</sup> Եբր.՝ ազատածը

<sup>դ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանը

<sup>ե</sup> Եբր.՝ ծակեն

<sup>զ</sup> Եբր.՝ դնեմ

<sup>է</sup> Կամ՝ Նեղոսի

<sup>ը</sup> Եբր.՝ կ'ընկղմի



## ԱՄՈՎՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Եւ իր կամարը երկրի վրայ հիմներ է.  
Ծովուն ջուրերը կը կանչէ,  
Ու գանոնք երկրի մակերեսին վրայ կը թափէ.  
Անոր անունը Եհովա է:

- 7 «Միթէ դուք ինձի Եթովպիացիներու որդիներուն պէս չէ՞ք,  
Ո՛վ Իսրայէլի որդիներ,— կը պատգամէ Տէրը.—  
Միթէ ե՛ս չբարձրացուցի՞ Իսրայէլը Եգիպտոսի երկրէն,  
Նաեւ Փղշտացիները՝ Կափթորէն,  
Եւ Վստրիները՝ Կիրէն»:
- 8 Ահա՛ Տէրոջ՝ Եհովայի աչքերը **այդ** մեղաւոր թագաւորութեան վրայ են.  
«Զայն երկրագունդի մակերեսին վրայէն պիտի բնաջնջեմ.  
Սակայն Յակոբի տունը բոլորովին պիտի չբնաջնջեմ,— կը պատգամէ Տէրը:—
- 9 Արդարեւ ահա՛ ես կը հրամայեմ,  
Եւ Իսրայէլի տունը բոլոր ազգերուն մէջ պիտի խարբալեմ,  
Ինչպէս **ցորենը** մաղով կը խարբալեմ.  
Սակայն ո՛չ մէկ իհատիկ գետինը պիտի իյնայ:
- 10 Իմ ժողովուրդիս բոլոր մեղաւորները սուրով պիտի մեռնին,  
**Թէպէտ** անոնք կ'ըսեն. «Չարիքը **մեր վրայ** պիտի չհասնի,  
Ու մեր առջեւը պիտի չգայ»:

## ԻՍՐԱՅԷԼԻ ԱՊԱԳԱՅ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

- 11 «Այդ օրը Դաւիթի տապալած խորանը պիտի վերահաստատեմ,  
Անոր ճեղքուածքները պիտի փակեմ,  
Փլատակները պիտի վերականգնեմ,  
Եւ գայն հին օրերուն պէս պիտի կառուցանեմ.
- 12 Որպէսզի անոնք տիրանան Եդովմի մնացորդին  
Ու բոլոր զազգերուն՝  
՚Որոնք իմ անունովս կոչուած են՞»,  
Կը պատգամէ Տէրը՝ որ այս բանը կ'ընէ:
- 13 «Ահա՛ կու գան օրերը,— կը պատգամէ Տէրը,—  
Երբ հերկողը հնձողին պիտի հասնի,  
Եւ խաղող կոխողը՝ սերմնացանին.  
Լեռները քաղցու պիտի կաթեցնեն,

---

<sup>բ</sup> Կամ՝ աստիճանները

<sup>գ</sup> Եբր.՝ Արամացիները, **այսինքն՝** Սուրիացիները

<sup>հ</sup> Կամ՝ խճաքար

<sup>լ</sup> Եբր.՝ չմօտենայ

<sup>խ</sup> Եբր.՝ տաղաւարը

<sup>ծ</sup> Կամ՝ հեթանոսներուն

<sup>կ</sup> Եբր.՝ Որոնք վրայ իմ անունս կոչուած է

Ու բոլոր բլուրները անով պիտի ճյորդին:

- 14 Իմ ժողովուրդս՝ Իսրայելը գերութենէն պիտի վերադարձնեմ.  
Անոնք աներուած քաղաքները պիտի կառուցանեն եւ **անոնց մէջ** բնակին,  
Այգիներ պիտի տնկեն ու **անոնց** գինին խմեն,  
Պարտէզներ պիտի պատրաստեն եւ **անոնց** պտուղները ուտեն:
- 15 Զանոնք իրենց հողին վրայ պիտի տնկեն,  
Եւ անգամ մըն ալ պիտի չխլուին իրենց հողէն՝ որ իրենց տուի»,  
Կը յայտարարէ Տէրը՝ քու Աստուածդ: